Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեման	Ինքնուրույնության ձևավորումը 4-րդ դասարանում <<ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ>> թեման ուսուցանելիս
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող	Մերի Ալֆրեդի Սարգսյան Մայրենի 094443939 maryalfa107@gmail.com
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Ա.Պուշկինի անվան թիվ 8 հիմնական դպրոց Մոսկովյան 17 010-564931 pushkinschool8@mail.ru

Բովանդակություն

Ներածություն **3**
Հիմնական բովանդակություն **4**
Եզրակացություններ, առաջարկություններ **5**
Օգտագործված գրականության ցանկ **6**
Հավելվածներ **7**

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը	Նպատակը՝ հետազոտական աշխատանքի միջոցով աշակերտների հետ բացահայտել Մատենադարանի գաղտնիքները: Թեմայի ուսումնասիրության ընթացքում ցույց տալ աշակերտների ներգրավվածությունը, ինքնուրույնության դրսևորումը, արժեքային համակարգը: Հարցը հետևյալն է՝ Ի՞նչ մեթոդներով կարելի է ձևավորել սովորողի ինքնուրույն գործունեությունը 4-րդ դասարանում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	1) լեզվական գրագիտություն և կարողունակություն 2) մշակութային կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	4-րդ դասարան 18 աղջիկ 17 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները	Հետազոտական մեթոդը՝ *դիտում:*

(օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	20. 07. 23- 20. 09. 23

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	1. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքիքյան. «Մայրենի 4» դասագիրք https://lib.armedu.am/files/resource/files/2023-07-10/248f801333a87cd6488dc54d43608de3.pdf 2. https://multiurok.ru/files/ink-nowrowynowt-yan-dzevavorowme.html

Հետազոտության ընթացքը	«Երեխան ունի իր առանձահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան , քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով»: Ժան Ժակ Ռուսո Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսումնական գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Այժմ բոլոր ոլորտներում, ինչպես նաև կրթական համակարգում, զարգացման տեմպերն արագանում են:Աշակերտներին պետք է տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այն պետք է դառնա առանձնահատուկ կարողություն, անձնային որակ: Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, հոգևոր ու մտավոր կյանքը գիտակցելու, գնահատելու, իր զարգացման ուղին գտնելու ընդունակություն է: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, քայլ առ քայլ, դասից դաս, դասարանից դասարան:Իմ աշխատանքային փորձը վկայում է, որ ճիշտ ու համակարգված ինքնուրույն աշխատանքի արդյունքում սովորողն ավելի խորքային գիտելիք է ձեռք

բերում, քան այն դեպքում, երբ ուսուցիչն ինքն է պատրաստի գիտելիքը մատուցում: Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ նորը ճանաչելու ցանկություն է առաջանում,որն էլ նպաստում է ինքնակրթության ու ինքնակատարելագործման, գործնական կարողությունների և հմտությունների, ճանանաչողական ու ստեղծագործ ունակությունների, ազատ մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

Այսպիսով, ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար: Պետք է մշտապես հիշել, որ ոչինչ հաստատուն չէ, բացի փոփոխությունից, քանզի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները ևս կապված են հասարակական կյանքի պատմական զարգացման հանգամանքների և մանկավարժական նորագույն փորձի ու նվաճումների հետ:

Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը

Մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի

կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն

	կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը: 5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը: 6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անցուդարձ:Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները: Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝ 7. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն,այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում: **Հետազոտական աշխատանքի վարման տեխնիկային վերաբերող պահանջներ**. 1. Թեման պետք է լինի զգացմունքային, հետաքրքրություն առաջացնի ուսման նկատմամբ և դաստիարակի գիտելիքների պահանջարկ 2. Հետազոտության ընթացքում ուսուցչի և աշակերտների գործողությունները պետք է ավարտուն լինեն 3. Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում պետք է լիարժեք շփում լինի, պետք է պահպանվեն մանկավարժական տակտը և մանկավարժական լավատեսությունը: 4. Գործընթացքում պետք է տիրի բարի կամքի դրսևորման և ակտիվ ստեղծարար աշխատանքի մթնոլորտ: 5. Հնարավորության սահմաններում հարկ է փոփոխել աշակերտների գործունեության

տեսակները, լավագույնս համադրել դասավանդման տարբեր մեթոդները և հնարները:

6. Դպրոցում գործող ուղղագրական ռեժիմը պետք է միասնական լինի:

7. Ուսուցիչը պետք է ապահովի յուրաքանչյուր աշակերտի ակտիվ ուսումնառությունը:

Իսկ հիմա փորձենք այս ամենը վերածել հետազոտական աշխատանքի:

Դավիթ Գյուրջինյանի հեղինակած ՄԱՅՐԵՆԻ 4 դասագրքում զետեղված ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ տեքստի ուսումնասիրման ընթացքում իմ առջև դրված նպատակներից է ձևավորել ազգային արժանապատվությունը, հայ լինելու հպարտությունը, հայկականությունը: Միայն այսպես է հնարավոր երեխաներին մոտեցնել ազգային մշակույթի քաղաքականությանը և մշակութային պատմության յուրացմանը:



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մատենադարան բառը կազմված է մատյան և դարան բաղադրիչներից: Մատյան հնում նշանակել է գիրք, իսկ դարան նշանակում է տպարան, գրադարան, արվեստանոց: Մատենադարանը գրապահոց է:

Հին ժամանակներում հարյուր, ինչպես և այլ ժողովուրդներ, գրիչը գրում էին ձեռքով: Այդ գրածները կոչվում են ձեռագիր մատյաններ: Դրանցից շատերը մատաղաթից են: Մատաղաթը հատուկ եղանակով պատրաստում էին հորթի, գառան կամ ուլի կոշվից: Մարդիկ գալիս, որոնք տարբեր հեղինակների գրվածքներ պատվիրում էին մատաղաթի թերթերի վրա: Դրանց գրիչներ էին անվանում: Իսկ մատյանները պատվիրատուները նկարիչներին հանձնում էին անվանում: Հետո ոսկեր վարպետներ մատաղաթները միացնում էին, կարում ու գիրք դարձնում:

Հայերին հայտնաբերը ձեռագիր մատյաններ ստեղծում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում: Այդ պատճառով էլ այն հանվում կոչում են ձեռագրատուն:

Ձեռագրերից շատը 14 հազարը հարյուրն են, 2800-ը՝ օտար լեզուներով: Սրանց մեջ կան սարքերին, պարսկերին, թուրքերին, հունարեն և այլ լեզուներով մատյաններ: Դրանք գիտությունով են զբաղվում ու մշակույթի տարբեր բնագավառների՝ պատմության, գրականության, քերականության, մաթեմատիկա, աշխարհագրության, բժշկության, իրավունքի, փիլիսոփայության, ռազմագիտության և այլն:

Մատենադարանում պահվող ձեռագրերից յուրաքանչյուրը մարդ կանց պիտ իր կենսագրությունն ունի: Պատմում են, որ գիրք ընկած ձեռագրերի հանգամ հարիր հրթիռն գլուխդայում, տեսնուն ընկած գիրց են հանվաքել, վերանել ու ձեռագրերի օտար ազիրից տուն բերել: Հայ մարդիկ հրթիռն իրենց կյանքի գնով են փրկել ձեռագրերը:

Բացում գրանվերի միջով են անցել ձեռագրերը, մարդկանց նման գիրը տարվել և հրից ու գրից փրկվելիս՝ հեղել են հասել: Դրանք հայ ժողովրդի տառապանքների ու հարթանակների, նրա ազատասիրի ու ստեղծագործ ոգու վկաներն են:

Հանելուկ

Հրաշք գաղտ է, ցանված գաղտ է.
Երգեմ, ասատ, գաղտը ասաց,
Բաց ասեմ որ մեջ է տաքիս
Բարիքները իր ավարատ:

Թեմատիկ առաջադրանք

Ինչ տուներ, որտեղ գրքեր չկան, նման է հոգուց զրկված մարմնի:

Ինչպիսի խնդրանք որ մեզ ձեռագիր մատյան բառն ստացել գրանվերից է ոչիչ խմաստով: Այդ. նման մատյան հրանանում էր ոչիչ՝ ձեռքի ու ոչ բառով պիտանի անվանել մարդու գրքերը ունեցող ոչի վերը. դրվ մեկ ստանալ բանիր են գտում: Նրանցից էլ բոլորս մեզ ձանոթ ցրտոցման մարդանց ցամ ստանամարդու:

Վիկտոր Հյուգոյ

50

Նոր նյութի հաղորդումը մեկնարկում է էլեկտրոնային գրատախտակին Մատենադարանի և Մաշտոցի ու Կորյունի արձանախմբի նկարների ցուցադրությամբ:

Հետևյալ հարցերի միջոցով փորձում եմ հասկանալ, թե աշակերտները որքանով են տեղյակ թեմայից.

-Ի՞նչ շենք է պատկերված:

-Ո՞ւմ արձանախումբն է ներկայացված:

-Ի՞նչ գիտեք Մատենադարանի մասին:

Այս հարցաշարին հաջորդում է դասագրքում զետեղված ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ տեքստի լուռ ընթերցումը, որից հետո կպարզենք, թե ինչ նոր բան իմացան նյութից:

Տեքստի նորածանոթ բառերին և գիտության ու մշակույթի բնագավառներին ծանոթանալուց հետո ևս մեկ անգամ անդրադարձ կկատարենք տեքստի բովանդակությանը, այս անգամ ԳՈՒՍ աղյուսակի միջոցով:



Գ և ***Ս*** սյունակները լրացնելուց հետո իմ ու աշակերտների համար ավելի պարզ է դառնում, թե ինչ գիտեին ու ինչ նոր բան սովորեցին այսօր: Քանի որ ***ՈՒ*** սյունակը մնաց ազատ, ապա փորձենք պարզել, թե ի՞նչ կուզեն իմանալ տվյալ թեմայի շուրջ: Հենց այս հարցի պատասխանն էլ պետք է դրդի ուսուցչին աշխատանքը տանել դեպի հետազոտություն և աշակերտներին մասնակից դարձնել իրենց իսկ առաջադրած կետերը ինքնուրույն ուսումնասիրելուն: Հենց նրանց ցանկությունների վրա հիմնվելով էլ փորձում եմ աշակերտներին առաջադրել հետաքրքիր հիմնահարցեր ու ենթահարցեր՝ հետազոտական աշխատանքն ավելի համակարգված կազմակերպելու և նրանց մեջ պրպտողականություն սերմանելու համար: Այս փուլում կարևոր է կրտսեր դպրոցականներին բացատրել, որ այն գիտելիքը, որը ինքնուրույն պրպտելու արդյունքում է ձեռք բերվում, ավելի արժեքավոր ու մնայուն է:

Հաջորդ դասին, երեխաների ցնակությունները հաշվի առնելով, առաջարկվեց ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ թեման է՛լ ավելի մանրամասն հետազոտելու երեք ենթաթեմա՝

1.ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2.ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐ

3.ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՈՒՅՆԵՐԸ

Երեխաներին առաջարկվում է բաժանվել երեք խմբի: Նրանց քանակով պատրաստված քարտերը կօգնեն գտնելու իրենց խմբակիցներին:

Յուրաքանչյուր քարտի վրա ենթաթեմային համապատասխանող նկար կա, որն էլ հուշում է, թե տվյալ խումբը որ թեմայի շուրջ է աշխատելու: Հաջորդ փուլում, երբ արդեն կազմավորված են խմբերը, աշակերտներն ստանում են ավելի համակարգված ուղղորդումներ:

<<Մատենադարան. Պատմական ակնարկ>> թեման ներկայացնող խումբը հետազոտության ընթացքում պետք է պարզի՝

1. ***Ինչպե՞ս է սկսվել Մատենադարանի ստեղծման պատմությունը:***
2. ***Ի՞նչ նշանակալից տարեթվեր կան՝ կապված Մատենադարանի հետ (5-րդ դար կամ Ոսկեդար, 1921 թ.՝ էջմիածին, 1939 թ.՝ Երևան, 1945-1957 թթ. կառուցում, 1962թ.անվանափոխում Մ.Մաշտոցի անունով):***
3. ***Քանի՞ մասնաշենք ունի Մատենադարանը:***
4. ***Ովքե՞ր են ճարտարապետները:***
5. ***Ո՞ր թվականից է Մատենադարանը գրանցված ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային հիշողության ցանկում:***
6. ***Ի՞նչ գործառույթ ունի ՅՈՒՆԵՍԿՕ-ն:***
7. ***Ի՞նչ է թվայնացումը:***

8. ***Ո՞րն է Մտենադարանում պահված նյութերի թվայնացման նպատակը:***

<<Ձեռագիր մատյաններ>> թեման հետազոտող խմբի հարցերն են՝

1. ***Ի՞նչ է ձեռագիր մատյանը: և ի՞նչ նյութերից էր պատրաստվում:***
2. ***Ովքե՞ր են գրիչները:***
3. ***Ո՞ր թեմաներով էին Մաշտոցի ու նրա աշակերտների կողմից արված առաջին թարգմանությունները:***
4. ***Ո՞րն է հայերեն թարգմանված առաջին նախադասությունը: Բացատրե՛ք նրա գլխավոր միտքը:***
5. ***Ձեռագրի ի՞նչ տեսակներ են հանդիպում մատյաններում (երկաթագիր, շղագիր, նոտրգիր...):***
6. ***Ձեռագրի ո՞ր տեսակից է մեզ հասել այսօրվա գրչի գաղափարը:***
7. ***Որո՞նք են Մատենադարանի ամենամեծ ու ամենափոքր մատյանները:***
8. ***Ինչպե՞ս <<Մշո ճառընտիրը>> հասավ Հայաստան:***

Երրորդ խումբը պետք է հետազոտի **<<Մատենադարանի գույները>>** թեման: Առաջադրվող հարցերն են՝

1. ***Ի՞նչ է մանրանկարչությունը և ո՞ր դարում է զարգացել:***
2. ***Հիմնականում ո՞ր թեմաներով էին նկարազարդվում ձեռագիր մատյանները:***
3. ***Ովքե՞ր էին ծաղկողները:***
4. ***Ինչերի՞ց ու ինչպե՞ս էին ստանում գույները:***
5. ***Ո՞ր մանրանկարչի արձանն է լրացնում Մատենադարանի վերին հարթակում տեղակայված արձանաշարքը:***
6. ***Ի՞նչ գիտեք Թորոս Ռոսլինի և Սարգիս Պիծակի մասին:***

7. ***Ո՞ր գույնն էր համարվում արքայական և ինչո՞ւ:***
8. ***Ի՞նչ հետաքրքիր փաստեր կներկայացնեք որդան կարմիրի մասին:***

Զինվելով վերոնշյալ ուղղորդող հարցերով՝ խմբերն սկսում են իրենց հետազոտումը: Յուրաքանչյուր խումբ ընտրում է համակարգող կամ ավագ, որի հետ միշտ կարող է կապի մեջ լինել ու կազմակեպչական հարցեր ուղղել: Հարցերին ծանոթանալով՝ աշակերտները բաշխում են աշխատանքը և որոշում՝ ով որ հարցի շուրջ է սկսելու հետազոտությունը: Ընտրում ենք շաբաթվա որևէ օր ու լրացուցիչ դասաժամ, որը տրամադրվելու է այս թեմայի շրջանակներում հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպելուն:

Կարևոր է, որ սովորողները պարզորոշ պատկերացնեն աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարեն այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Այս պահից ուսուցիչը դառնում է դիտորդ, ուղղորդող և վերահսկող:

Մեկ շաբաթ հետո արդեն հետազոտական խմբերը պետք է ներկայացնեն վերոնշյալ հարցերի շուրջ կատարված իրենց փոքրիկ հետազոտությունները: Քննարկումների արդյունքում պարզ կդառնան բացթողումները կամ ավելորդ տեղեկատվությունը: Այսպես աշակերտները կհասկանան, որ կոնկրետ հարցերը ենթադրում են կոնկրետ պատասխաններ,որը կարևոր է ողջ գիտակից կյանքի, կոնկրետ խնդիրների արագ լուծման ու կարևորն անկարևորից տարբերակելու համար:

Յուրաքանչյուր խմբի համար նախատեսված արկղիկում տեղ կգտնեն արդեն իսկ հետազոտված նյութերը՝ հաջորդ շաբաթ բացը լրացնելու պայմանով: Մինչ այդ, ես կծանոթանամ բոլոր գրառումներին և նշումների միջոցով կառանձնացնեմ կարևորները: Նաև դուրս կգրեմ նորածանոթ բառերը, որոնց վրա կաշխատենք հաջորդ հանդիպմանը:

Հետազոտական աշխատանքի հաջորդ փուլը գրառումների արդյունքների համակարգումն է, որին հաջորդելու է դաս-էքսկուրսիան Մատենադարանում: Մինչ Մատենադարան գնալը ստեղծվեց լրագրողական խումբ: Երեխաներն իրենք պատրաստեցին հարցեր,որոնք լրագրողները պետք է

ուղղեին իրենց համադասարանցիներին: Եվ իրենք որոշեցին, թե իրենց խմբից ով է լինելու լրագրողը և ով՝ հարցերին պատասխանողը: Հարցերը պատրաստեցին երեք փուլով.

- **Դեպի Մատենադարան քայլելիս (զգացմունքներ)**
- **Մինչ Մատենադարան մտնելը (սպասելիքներ)**
- **Մատենադարանից դուրս գալուց հետո (տպավորություններ)**

Լրագրողական աշխատանքի հղումը կցված է **<<Հավելվածներ>>** բաժնում:

Մատենադարան այցելելուց հետո կիսվեցին տպավորություններով, նույնիսկ լրացրեցին իրենց հետազոտական գրառումները նոր բացահայտումներով: Էքսկուրսիայի նպատակն այն էր, որ սովորողները համոզվեն՝ Մատենադարանում դեռ չբացահայտված շատ գաղտնիքներ կան: Նրանք պետք է արժևորեն և գիտակցեն իրենց ազգային պատկանելիությունը, ճանաչեն ու պահպանեն պատմամշակութային արժեքները: Սերն առ հայրենիք պետք է կրտսեր դպրոցականների մեջ սերմանել նաև ինքնուրույն հայրենիքը ճանաչելու ու բացահայտելու նման հնարավորություններ տալով:

Մինչ մեր հետազոտական աշխատանքն ավարտված համարելը, կազմակերպվեց ինքնաստուգում, զրույց երեք խմբերի միջև, որի միջոցով պարզեցինք՝ արդյո՞ք խմբերից յուրաքանչյուրը տիրապետում է մյուս խմբի հետազոտման արդյունքներին: Չէ՞ որ ավարտական դասին ամբողջական աշխատանքը ներկայացվելու է ոչ թե առանձին խմբերի, այլ ամբողջ դասարանի կողմից:

Այս ամենին հաջորդում է ամփոփիչ դասին պատրաստվելու գործընթացը: Յուրաքանչյուր խմբի համակարգող՝ իր օգնականների հետ և իմ հսկողությամբ պետք է պատրաստի սահիկաշար՝ չխախտելով իրենց ուղղված հարցերի հերթականությունը: Արդյունքները գովելի էին. սահիկաշարում նույնիսկ փոքրիկ տեսանյութեր էին զետեղել Մատենադարանի երկու ճարտարապետների՝ Մարկ Գրիգորյանի ու Արթուր Մեսչյանի, մանրանկարիչներ Թորոս Ռոսլինի ու Սարգիս Պիծակի և մագաղաթի ստեղծման մասին:

	Ամփոփիչ կամ փորձարարական դասին կրտսեր դպրոցականները մեծ ոգևորությամբ ներկայացրին իրենց կատարած հետազոտական աշխատանքն ու թեմատիկ սահիկաշարերը: Սիրով կիսվեցին առաջին անգամ կատարված նմանատիպ աշխատանքի մասին իրենց տպավորություններով ու խոստացան, որ դեռ շարունակելու են ուսումնասիրել ու հետազոտել Մատենադարանը: Գնահատման համար ընտրեցի վիկտորինա անցկացնելու տարբերակը: Խմբերն իրենք պետք է պատրաստեին հարցերը: Սա ևս մեկ հնարավորություն է համոզվելու, որ սովորողները լիովին տիրապետում են հետազոտված նյութին և կարողանում են պատասխանել զուգահեռ խմբից իրենց ուղղված հարցերին: Ինքնուրույնության ձևավորումը հնարավորություն է տալիս երեխաներին ձեռք բերել նորը ճանաչելու, բացահայտելու, ինքնակրթվելու ցանկություն և այդ ամենը դարձնելու իր կյանքի կարևորագույն օրինաչափություններից մեկը:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Իմ կատարած հետազոտության արդյունքում գալիս եմ հետևյալ եզրակացության՝ կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը չի կարող ձևավորվել ինքն իրեն, անհրաժեշտ է ուղղորդում ու վերահսկում, և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Աշակերտի կողմից անցկացված հետազոտական աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Օգտագործված գրականության ցանկ

https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&opi=89978449&url=https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf&ved=2ahUKEwiYsPb-q9SBAxU8RvEDHWu3BN8QFnoECAsQAQ&usg=AOvVaw2hRPJDpjz30RhPVZxVcMvr

https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&opi=89978449&url=https://innostud.am/application/library/5ced296a.pdf&ved=2ahUKEwiYsPb-q9SBAxU8RvEDHWu3BN8QFnoECBcQAQ&usg=AOvVaw19F4V5X6s9OwW5MFi4dkqu

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	Աշակերտների լրագրողական խմբի աշխատանքը. https://youtu.be/5fIdLTaTpus?si=PcOzIPzlHuo5CX34